Վահրամ Կնյազյան Ա/Ձ, «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ,

«Հուսալի Կամար» ՍՊԸ

**Հարգելի գործընկերներ,**

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021 թվականի կարիքների համար որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ԹԱԿ-ԳՀԾՁԲ-21/110 ծածկագրով հայտարարված մրցույթին Ձեր կողմից ներկայացված հայտերում տեղ են գտել ներքոնշյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ:

**Վահրամ Կնյազյան Ա/Ձ**

1. Ներկայացված փաթեթում բացակայում է հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիրը(երեր):

**«ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ**

1. Ներկայացված դիմում հայտարարությունը (հավելված թիվ 1) չի համապատասխանում հրավերով նախատեսված օրինակելի ձևին, անհրաժեշտ է համապատասխանեցնել,

2. Ներկայացված փաթեթում բացակայում են հրավերով պահանջվող հետևյալ փաստաթղթերը՝ տեղեկանք մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին հավելված 3-ը, հիմնական աշխատակազմում ներգրավվող մասնագետների հաստատված գրավոր համաձայնությունները, «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիրը(երեր):

**«Հուսալի Կամար» ՍՊԸ**

1. 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է 15 000 000 ՀՀ դրամ, իսկ նմանատիպ պայմանագիր է ներկայացվել 10 100 000 ՀՀ դրամի: Հրավերով սահմանված է, որ

*«նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից»:*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները (**եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ... ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը...**) խնդրում եմ ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ :

Հարգանքով ՝

ԹԱԿ-ԳՀԾՁԲ-21/110 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղար

Արթուր Աբգարյան

17.12.2021թ.